



«Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա» ՀԿ-ի

ԷդուԱրմենիա նախաձեռնության

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

**Թեմա՝ Դասավանդման մոտեցումներ ուսումնական նյութը
մատչելի դարձնելու նպատակով**

Ջետազոտող ուսուցիչ՝ Նորա Սաչյան

Ջրագդանի Վ. Սարոյանի անվան թիվ 11 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1. Ներածություն -----3**
- 2. Ուսուցման համագործակցային
տեխնոլոգիա-----5**
- 3. Դասի պլան -----13**
- 4.Եզրակացություն-----14**
- 4. Օգտագործված գրականության ցանկ-----17**

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման մոտեցումները այն բոլոր հնարների և միջոցների ամողջությունն է, որը կիրառում է ուսուցիչը աշակերտների հետ հարաբերվելիս՝ գիտելիքներ մատուցելու, ստուգելու, ամրապնդելու, սխալներն ուղղելու նպատակով:

Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրներից մեկը ուսուցման գործընթացի բոլոր մասնակիցների հնարավորությունների և ստեղծագործական ունակությունների բացահայտումն է:

Ուսուցումը սիստեմատիկ կրթության ամենակարևոր և վստահելի միջոցն է: Այն ուսուցչի կողմից ղեկավարվող սպեցիֆիկ գործընթաց է: Հենց ուսուցչի ուղղորդող գործունեության շնորհիվ է հնարավոր դառնում աշակերտների կողմից գիտելիքների և հմտությունների լիարժեք յուրացումը, նրանց մտավոր և ստեղծագործական ունակությունների զարգացումը: Ուսուցումը երկկողմանի գործընթաց է:

Դասավանդման մեթոդը ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և հնարները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ էլ սովորողների բնույթից:

Ուսուցման մեթոդներ, փոխներգործուն գործընթաց ուսուցչի և աշակերտների միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցումը և յուրացումը նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

Ավանդույթի համաձայն մանկավարժական ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի:

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերարտադրողական, բացատրական ցուցադրական, որոնողական, հետազոտական խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթաճանաչողական գործունեության բնույթի)
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

ԽՆԴԻՐՁ, ՈՐ ՈՒՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՁ.

Ինչպիսի՞ մեթոդ կիրառել, որպեսզի կարողանա աշակերտներին մատչելի և հասանելի մատուցել ուսումնական նյութը:

Ինչպե՞ս սկսել դասը:

Ի՞նչ արդյունք ակնկալել:

Ավանդական ուսուցման գործընթացում գլխավոր դերում ուսուցիչն է: Նա սխտեմավորում, կոնկրետացնում է ուսուցման բովանդակությունը, երեխաների ձեռք բերած գիտելիքներին տալիս տրամաբանական հիմնավորում:

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիան հիմնված է աշակերտների ստեղծագործական (պրոդուկտիվ) մտածողության զարգացման վրա: Նրա նպատակը աշակերտների կոմունիկատիվ հմտությունների ձևավորումն ու անընդհատ փոփոխվող սոցիալական միջավայրում ակտիվ գործունեության ծավալման նախապատրաստումն է:

1.Ուսուցման համագործակցային տեխնոլոգիա

«Տեխնոլոգիա» բառն առաջացել է հունական «teche» (արվեստ, հմտություն, վարպետություն) բառից: Ուսուցման տեխնոլոգիան ուսումնական գործընթացների և օպերացիաների շղթա է, որն ուղղված է կրթական նպատակների հաջող իրականացմանը:

Ներկայումս աշխարհի շատ զարգացած երկրներում ավարտվում է հասարակական-քաղաքական ֆորմացիայի նոր տիպի՝ հետկապիտալիստական «ինֆորմացիոն» հասարակության կայացումը: Նրա գլխավոր առանձնահատկությունն է հասարակական աշխատանքի բաժանման ծանրության կենտրոնի տեղափոխումը նյութական արտադրության ոլորտից տեղեկատվության մշակման և օգտագործման ոլորտ: Տեղեկատվության հետ աշխատելու, մասնագիտական գործունեությունում այն ճիշտ օգտագործելու համար, անհրաժեշտ է տիրապետել նրա հետ աշխատանքի մեթոդներին: Ընդ որում, ոչ թե պարզապես տիրապետել, այլ հասկանալ այդ մեթոդների իմաստը, նրանց «դրական» և «բացասական» կողմերը, միաժամանակ չկորցնել արժեքային կողմնորոշումները, կարողանալ քննադատաբար վերաբերվել ստացվող տեղեկատվությանը:

Ելնելով վերը ասվածից՝ կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական կոմպյուտերային ձևավորումը հանդիսանում է ժամանակակից մասնագիտական կրթության արդի խնդիր:

Մանկավարժական տեխնոլոգիաների տարբեր ուղղությունների մեջ դրված նպատակներին համապատասխան են հանդիսանում՝

-ուսուցում և համագործակցություն,

-պրոյեկտորի մեթոդ,

-ուսուցման անհատական և տարբերակված մոտեցում:

Տվյալ դեպքում կքննարկենք համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, քանի որ կատեգորիայի կոմպետենտությունը գործնական է և նրա ձևավորումը կարող է տեղի ունենալ միայն սուբյեկտի գործունեության միջոցով, ինչն էլ ապահովում է այս տեխնոլոգիան:

Համագործակցային ուսուցման ամենատարածված տարբերակներն են՝

1. Student Team Learning (STL, ուսուցում թիմում)

STL հատուկ ուշադրություն է դարձվում «խմբային» նպատակներին և ողջ թիմի հաջողությանը, ինչին կարելի է հասնել միայն խմբի յուրաքանչյուր անդամի ինքնուրույն աշխատանքի արդյունքում՝ ուսումնասիրության ենթակա հարցի, թեմայի շուրջ աշխատանքի ժամանակ խմբի այլ անդամների հետ մշտական համագործակցության միջոցով: Այսպիսով, յուրաքանչյուր սովորողի խնդիրը կայանում է նրանում, որպեսզի ինչ-որ բան միասին բացահայտեն, որ թիմի յուրաքանչյուր անդամ տիրապետի անհրաժեշտ գիտելիքների, ձևավորի անհրաժեշտ հմտություններ և, միաժամանակ, որ ողջ թիմն իմանա, թե ինչի է հասել յուրաքանչյուր սովորող:

2. Jigsaw: Մանկավարժական պրակտիկայում նման մոտեցումը կրճատ անվանում են «աղաց»: Մասնակիցները միավորվում են վեց հոգանոց խմբերում գիտական նյութի վրա աշխատելու համար, որը բաժանված է մասերի (տրամաբանական և իմաստային): Խմբի յուրաքանչյուր անդամ նյութ է գտնում իր մասով: Այնուհետև նույն հարցն ուսումնասիրող, բայց տարբեր խմբերում գտնվող մասնակիցները հանդիպում և իրականացնում են տեղեկավարության փոխանակում որպես տվյալ հարցի փորձագետներ: Սա կոչվում է «փորձագետների հանդիպում»: Հետո նրանք վերադառնում են իրենց խմբերը և մյուս անդամներին սովորեցնում այն ամենը, ինչ սովորել են:

Ողջ խումբը հետաքրքրված է տեղեկատվության յուրացմամբ խմբի յուրաքանչյուր անդամի կողմից, քանի որ թիմի հաջողությունը կախված է յուրաքանչյուր ներդրումից, ինչպես նաև խմբի առջև դրված խնդրի միասնական լուծումից:

3. Սովորում են միասին: Յուրաքանչյուր խումբ ստանում է մեկ առաջադրանք, ինչը հանդիսանում է ինչ-որ մեծ թեմայի ենթահարց, որի վրա

աշխատում են բոլոր ուսանողները: Միաժամանակ աշխատանքի արդյունքում, առանձին խմբերի և ընդհանուր առմամբ խմբերի, ողջ կյանքի յուրացմանն է հանգեցնում:

4. Միկրոխմբեր: Սովորողների հետազոտական աշխատանքը. այս տարբերակով շեշտադրումը կատարվում է ինքնուրույն գործունեության վրա: Սովորողներն աշխատում են կամ անհատապես, կամ վեց հոգանոց միկրոխմբերում: Նրանք ընտրում են ընդհանուր թեմայի ենթաթեման, որը պետք է ուսումնասիրվի ողջ ուսումնական խմբի կողմից: Հետո փոքր խմբերում այդ ենթաթեման բաժանվում է առանձին սովորողների համար անհատական խնդիրների: Այսպիսով, յուրաքանչյուրը պետք է ներմուծի իր բաժինը ընդհանուր խնդրի մեջ:

Միկրոխմբերում բանավեճերը, քննարկումները հնարավորություն են տալիս ծանոթանալ յուրաքանչյուր սովորողի աշխատանքի հետ:

Պետք է նշել, որ համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ի տարբերություն այսօր դեռևս գործող ուսուցման ավանդական համակարգերի (դասախոսություն, պրակտիկա), ավելի հեշտ է ներմուծվում ուսումնական պրոցեսում, կարող է չդիպչել ուսուցման բովանդակությանը, որը որոշված է բազային մակարդակի կրթական ստանդարտների համար: Միաժամանակ, սա տեխնոլոգիա է, որը թույլ է տալիս իրական ուսումնա-դաստիարակչական գործընթացին ինտեգրվելու ժամանակ հասցնել ցանկացած ծրագրով, կրթական ստանդարտներով դրված նպատակներին:

Այսպիսով, համագործակցային ուսուցման տեխնոլոգիան վերաբերվում են նորարարականին, արդյունավետորեն նպաստում է սովորողների տեղեկատվական կոմպետենտության ձևավորմանը, իսկ դա իր հերթին թույլ է տալիս իրականացնել որակյալ մասնագետների պատրաստման սոցիալական պատվեր, ինչը նրանց աշխատաշուկայում դարձնում է մրցունակ:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան իրականացվում է ժողովրդավարություն, հավասարություն, գործընկերություն, ուսուցիչ-աշակերտ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություններում: Ուսուցիչը և աշակերտը միասնաբար ընտրում են նպատակները, բովանդակությունը, տալիս են գնահատականներ, գտնվում են համագործակցային, համաստեղծագործ հարաբերությունների մեջ:

Համագործակցային մանկավարժական նպատակային կողմնորոշումները՝

- Պահաջների մանկավարժությունից հարաբերությունների մանկավարժության անցում,
- Հումանիտար-անհատական մոտեցում երեխայն,

- Ուսուցման և դաստիարակության միասնություն

Համագործակցային մանկավարժությունը հանդիսանում է 80-ական թվականների ամենամեծածավալ ընդհանրացումներից մեկը, որը կյանքի է կոչում կրթության մեջ բազում նորարական պրոցեսներ:

Որպես ամբողջական տեխնոլոգիա համագործակցային մանկավարժությունը դեռ չի վերածվել մոդելի, չունի նորմատիվա-կատարողական գործիքավորում, նրա գաղափարները մտել են գրեթե բոլոր ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների շարքը:

Համագործակցային մանկավարժությունն ունի հետևյալ դասակարգային բնորոշումները՝

- Ըստ կիրառման մակարդակի՝ համամանկավարժական տեխնոլոգիաներ,
- Ըստ փիլիսոփայական հիմքի՝ հումանիստական
- Ըստ զարգացման ընդհանուր գործոնի՝ համալիր բիոսոցիալական և հոգեծին,
- Ըստ յուրացման հայեցակարգի՝ ասոցիատիվ-ռեֆլեկտորային փուլային ինտերիորիզացիա,
- Ըստ անհատական կառուցվածքներին կողմնորոշման՝ համակողմանի և հումանիստական
- Ըստ բովանդակային բնույթի՝ ուսանողության դաստիարակչական, ժամանակակից հումանիստական, համակրթական, ներառական,
- Ըստ կառավարման տիպի՝ փոքր խմբերի համակարգեր
- Ըստ կազմակերպական գործոնի՝ ակադեմիական+ակումբային, անհատական +խմբային, տարբերակող,
- Ըստ երեխային մոտեցման բնույթի՝ հումանիստա-անհատական, սուբյեկտ-սուբյեկտային,
- Ըստ գերակայող մեթոդի՝ խնդրա-փնտրողական, ստեղծագործական, երկխոսական, խաղային
- Ըստ սովորողներ կատեգորիայի՝ զանգվածային

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիայի մեջ առանձնացվում են 4 ուղղություններ.

Մարդասիրա-անհատական մոտեցում երեխային, դպրոցական կրթական համակարգի կենտրոնում է դրվում անհատի որակների համագումար զարգացումը,

Դիդակտիկորեն ակտիվացնող և զարգացնող համալիր, բացվում են նոր սկզբունքային մոտեցումներ և միտումներ «ինչ» և «ինչպես» սովորեցնել

երեխաներին հարցի լուծման համար, ուսուցման բովանդակությունը դիտարկվում է որպես անհատի զարգացման միջոց, ուսուցումը տարվում է դեպի ընդհանուր գիտելիքներ, ունկություններ, հմտություններ և մտածելակերպի միջոցներ, ինտեգրացիա, տարբերակում, կիրառվում է դրական ստիմուլյացիան,

Դաստիարակության հայեցակարգ. Համագործակցային մանկավարժության հայեցակարգային դիրքերը արտացոլում են կարևոր միտումներ, որոնց համաձայն զարգանում է դաստիարակությունը ժամանակակից դպրոցում՝

Գիտության դպրոցից վերածում Դաստիարակության դպրոցի,

- Աշակերտի անհատականության առաջադրումը ողջ դաստիարակչական համակարգի կենտրոն,
- Դաստիարակության մարդասիրական կողմնորոշում, համամարդկային արժեքների ձևավորում,
- Երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացում,
- Հայ ազգային և մշկութային ավանդույթների վերածնունդ,
- Անհատական և խմբային, դաստիարակության համադրում,
- Աշխատանքային նպատակի սահմանում:

Համագործակցային մանկավարժական տեխնոլոգիան և գաղափարաբա-նությունը որոշում է կրթության բովանդակությունը:

Շրջակա միջավայրի մանկավարժեցում. Համագործակցային մանկավարժության դպրոցը դնում է առաջատար, պատասխանատու դիրքում դաստիարակության այլ ինստիտուտների համեմատություն, որոնց գործունեությունը պետք է դիտարկվի և կազմակերպի մանկավարժական նպատակահարմարության դիրքերից: Աճող անհատի ձևավորման հարցում կարևոր ինստիտուտներ են հանդիսանում դպրոցը, ընտանիքը և սոցիալական միջավայրը: Արդյունքները որոշվում են դաստիարակության բոլոր երեք աղբյուրների միասնական գործունեությամբ: Այդ պատճառով առաջին պլան են մղվում կոմպետենտ կառավարման գաղափարը, համագործակցությունը ծնողների հետ, երեխայի պաշտպանության հասարակական և պետական ինստիտուտների վրա ազդեցությունը:

2. Ուսուցման ավանդական տեխնոլոգիա

«Ավանդական ուսուցում» տերմինը ենթադրում է, նախ և առաջ, ուսուցման դաս-դասարանային կազմակերպում, ձևավորվել է 17-րդ դարում դիդակտիկայի

սկզբունքների հիման վրա Կոմենսկու կողմից և մինչև օրս գերակայում է աշխարհի դպրոցներում:

Ավանդական դաս-դասարանային տեխնոլոգիաների տարբերակիչ նշան են հանդիսանում՝

1. գրեթե միևնույն տարիքի և պատրաստվածության մակարդակի սովորողները կազմում են դասարան, որն իր ամբողջ կազմը պահպանում է ուսուցման գրեթե ողջ ընթացքում,
2. դասարանն աշխատում է միասնական տարեկան պլանով և ծրագրով, որը համապատասխանում է դպրոցականին: Սրա հետևանքով երեխաները պետք է գան դասի տարվա միևնույն ժամանակահատվածում և օրվա նախանշված ժամերին,
3. պարապմունքների հիմնական միավորը դասն է,
4. դասը, որպես կանոն, նվիրված է մեկ առարկայի, թեմայի, որի համար աշակերտները աշխատում են միևնույն նյութի վրա,
5. դասը ղեկավարում է ուսուցիչը, նա գնահատում է իր առարկայի արդյունքները, յուրաքանչյուր աշակերտի ուսուցման մակարդակը և տարվա վերջում որոշում է կայացնում աշակերտներին փոխադրել հաջորդ դասարաններ,
6. դասագրքերը հիմնականում կիրառվում են տնային աշխատանքների համար: Ուսուցման նպատակն է շարժական կատեգորիան, որը կախված պայմաններից, ներառում է այս կամ այն բաղադրիչը:

Նպատակների պարունակությամբ ԱՏ-ները կողմնորոշված են հիմնականում դեպի գիտելիքների, ունակությունների և հմտությունների յուրացմանը, այլ ոչ թե անհատի զարգացմանը:

Հայեցակարգային դիրք. ԱՏ-ի հայեցակարգային հիմքը կազմում են մանկավարժական սկզբունքներ, որոնք ձևավորվել են դեռևս Կոմենսկու կողմից՝

- Գիտականություն (սխալ գիտելիքներ լինել չեն կարող, կարող են լինել ոչ ամբողջական),
- Բնահարմարություն (ուսուցումը որոշվում է զարգացմամբ),
- Հաջորդականություն և պարբերականություն
- Հասանելիություն
- Ամբողջություն
- Գիտակցություն և ակտիվություն
- Չննականություն

- Տեսության և պրակտիկայի կապ
- Տարիքային և անհատական յուրահատկությունների հաշվառում

Ավանդական համակարգը մնում է միատիպ, չնայած ընտրության և տարբերականության ազատության մասին դեկլարացիային: Բազային ուսումնական ծրագրերը հիմնվում են երկրի համար միասնական չափանիշների վրա:

Մեթոդիկայի յուրահատկությունները. ԱՏ-ն, նախ և առաջ, իրենցից ներկայացնում են պահանջմունքների բռնատիրական մանկավարժություն, ուսումը թույլ է կապված աշակերտի ներքին կյանքի, նրա բազմաբնույթ հարցադրումների և պահանջմունքներ հետ, բացակայում են անհատական յուրահատկությունների, անհատի ստեղծագործական կարողությունների բացահայտման պայմանները:

Ուսուցման բռնատիրությունն արտահայտվում է՝

- Գործունեության կանոնակարգման
- Հսկողության կենտրոնացման
- Դեպի միջին աշակերտը կողմնորոշման մեջ

Աշակերտի դիրքը՝ աշակերտը ուսումնական փոխազդեցության ենթարկվող օբյեկտ է, աշակերտը «պետք է», աշակերտը դեռ լիակատար անհատ չէ:

Ուսուցչի դիրքը՝ նա հրամանատար է, միակ նախաձեռնող դեմքը, դատավորը «միշտ ճիշտ է» և այլն:

Գիտելիքների յուրացման մեթոդները հիմնվում են՝

- Պատրաստի գիտելիքների հաղորդման վրա
- Ուսուցում օրինակի վրա
- Մասնավորից ընդհանուրին անհատական տրամաբանության վրա
- Մեխանիկական հսկողության վրա
- Բանավոր շարադրանքի վրա
- Ռեպրոդուկտիվ վերարտադրության վրա:

Ուսուցման գործընթացը որպես ԱՏ-ի գործունեություն բնորոշվում է ինքնուրույնության բացակայությամբ, աշակերտների ուսումնական աշխատանքի թույլ մոտիվացիայով:

Երեխայի ուսումնական գործունեության կառուցվածքում՝

- Ինքնուրույն նպատակադրումը բացակայում է, ուսման նպատակը դնում է ուսուցիչը
- Գործունեության պլանավորումը տարվում է դեպի դուրս, փաթաթվում է աշակերտների վզին նրա ցանկություններին հակառակ՝

- Երեխայի գործունեության վերջնական վերլուծությունն ու գնահատումը կատարվում է ոչ թե նրա, այլ ուսուցչի, այլ մեծահասակների կողմից: ԱՏ-ին վերաբերվում են նաև դասախոսություն-սեմինար-ստուգարքային համակարգը, նախ նյութը տրվում է դասախոսության տեսքով, հետո կիրառվում է սեմինար, պրակտիկ և լաբորատոր պարապմունքներում, իսկ արդյունքն արտահայտվում է ստուգարքի ձևով:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Առարկա` Մաթեմատիկա

Ուսուցիչ` Ն.Սաչյան

Դասարան` IV^Գ

Դասի տևողությունը` 45 րոպե

Դասի թեման` Արագություն, ժամանակ, հեռավորություն

Դասի տեսակը` Խառը

Դասի կառուցվածքը` ԽԻԿ համակարգով կապահովվի միջառարկայական կապը

Դասարանի կահավորումը`

Աշակերտական նստարանները դասավորված են խմբային աշխատանք կատարելու համար:

Յուրաքանչյուր խմբի ավագ կվերցնի 1 արկղիկ, որի մեջ կլինի խմբի առաջադրանքը և խմբի համարը:

Անհրաժեշտ պարագաներ՝

Դասագիրք, մեծադիր նկարներ, արագաչափ, տեսանյութ

Դասի նպատակը.

1. Աշակերտները կսովորեն գտնել մարմնի շարժման արագությունը՝ իմանալով նրա անցած հեռավորությունը և ծախսած ժամանակը:
2. Կամրապնդեն հեռավորությունը գտնելու վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները:
3. Կհասկանան արագության, ժամանակի և հեռավորության միջև եղած առնչությունները:
4. Կսովորեն մի քանի մարմինների շարժման արագությունները:
5. Կստանան աշխարհաճանաչողական գիտելիքներ:
ա. Ե՞րբ պետք է զիջել ճանապարհը և ինչպե՞ս
բ. Ինչո՞ւ են լույսն ավելի շուտ տեսնում, քան ձայնը լսում ամպրոպի:
Ինչո՞ւ են ծառի խնձորների մի կեսը սև, մյուս կեսը սպիտակ:

Արժեքային համակարգ՝

Կհասկանան երթևեկության կանոններին հետևելու անհրաժեշտությունը: Կկարևորեն արագաչափ սարքերի նշանակությունը: Կհասկանան, երբ կարելի է արագ վարել, ինչո՞ւ չի կարելի արագ վարել, վազել մարդաշատ վայրերում (դպրոցի միջանցքում):

Դասի ընթացքը՝ կազմակերպչական մաս

1. Ստուգել հաճախումները
2. Տնային հանձնարարությունները

Խթանում՝

Սիրելի երեխաներ, այսօր մարտի 15-ն է, օրը՝ հինգշաբթի:

Ուղերձ՝

Գուշակեք, ո՞ր բառն է հաճախակի գործածվում և կռահեք, թե ինչո՞ւ:

Արագ մտածել, արագ հաշվել, արագ պատասխանել, արագ (շտապ) օգնության հասնել, արագ արձագանքել, արագ վազել, արագ վարել:

Ստուգել տնային առաջադրանքների կատարողականը՝ շրջելով իսկությունը գրատախտակին գրված պատասխաններով:

Այդ թվերով էլ կատարել բանավոր հաշիվ:

2301

3165

4838 4***

61

Ինչպես կփոխվեն թվերը, եթե...

Կրկնել 2-ի, 5-ի բաժանելիության հայտանիշները:

Նշել 12, 16 թվերի բաժանարարները և մի քանի պատիկ:

Իմ ընկ. –Այսօր կանցնենք նոր թեմա՝ «ճանապարհ, ժամանակ, արագություն»:

Կսովորենք որոշել մարմնի արագությունը, կժանոթանանք արագաչափին:

Արագաչափ.

Արագությունը միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհին է:

Լուծել խնդիր 762 աղյուսակով:

	Արագութ.	Ժամ	Չեռավորություն
Ավտոմեքենա	?	3ժ.	240կմ
Ավտոբուս	?	4ժ	240կմ

Որոշել մոտոցիկլի արագությունը, եթե նա 3 ժամում անցել է 75կմ ճանապարհ:

N 763-ի ա-ն, 764-ը, 763-ի բ-ն հանձնարարել տնային աշխատանք:

N766 համառոտ գծագրով

Տիգ. դադար՝ «Չանելուկ»

Ինչո՞ւ են խնձորները սև և սպիտակ:

Սովորեցնել խնձորենուց քաղել 10խնձոր և տեղավորել արկղում:

Կշռադատում

Տեսանյութում նշված խնդիրը լուծել բանավոր և պարզաբանել պատասխանը:

Իմբային աշխատանք

Ստանալ խճանկար պատկեր և կազմել խնդիր ստացված պատկերների արագությունը գտնելու վերաբերյալ:

Տրամաբանական խնդիրներ

Լրացնել բաց թողնված թվերը:

Ամփոփում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների համակարգի կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքների ձեռքբերմանը, մտածության զարգացմանը, հետաքրքրությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ տեխնոլոգիաներով: Դրանց զուգահեռ կիրառվում են նաև ավանդական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Громыко Г.О. Иностранная речь. Самоучитель. –Wechselseitig Lernen e.V.2004.-180с. ISBN 3-00-014957 (иняз-спорт)
2. Колесникова И.А. Основы технологической культуры педагога: Научно-методическое пособие для системы повышения квалификации работников образования.-СПб. ДРОФА-САНКТ-ПЕТЕРБУРГ, 2003

3. Олешков М.Ю. Педагогическая технология: проблема классификации и реализации.

Профессионально-педагогические технологии в теории и практике обучения. Сборник научных трудов.-Екатеринбург:РГППУ, 2005-С.5-19